# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ, 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 258-Ն

20 մարտի 2024 թվականի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի , <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթներով, որոշում եմ

1. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 03 (Մշակույթի տան պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի առաջին և երկրորդ եռամսյակների «100.0» և «200.0» թվերը փոխարինել «265.0» թվերով, 4111 (Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի առաջին և երկրորդ եռամսյակների «7500.0» և «10000.0» թվերը փոխարինել «7335.0» և «9935.0» թվերով:

2. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 02, դաս 04 (Այլ մշակութային կազմակերպություններ) և տնտեսագիտական դասակարգման 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների «3000.0», «5000.0», «5002.0» և «9500.0», թվերը համապատասխանաբար փոխարինել «2000.0», «4000.0», «4002.0» և «8500.0» թվերով, 5113 (Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում) հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների «0» թվերը փոխարինել «2300.0» թվերով, 5129 (Այլ մեքենաներ և սարքավորումներ) հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների «250.0» թվերը փոխարինել «600.0» թվերով:

3. Գործառական դասակարգման բաժին 08, խումբ 01, դաս 01 (Հանգիստ և սպորտ) և տնտեսագիտական դասակարգման 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի առաջին եռամսյակի «0» թիվը փոխարինել «700.0» թվով, երկրորդ,

երրորդ և չորրորդ եռամսյակների «500.0», թվերը փոխարինել «1200.0» թվերով:

4. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 06, դաս 01 (Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) և տնտեսագիտական դասակարգման 4239 (Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների «200.0» թվերը փոխարինել «500.0» թվերով:

5. Գործառական դասակարգման բաժին 01, խումբ 01, դաս 01 (Ապարատի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի առաջին և երկրորդ եռամսյակների «50500.0» և «103938.7» թվերը համապատասխանաբար փոխարինել «49000.0» և «102438.7» թվերով, 4269 (Հատուկ նպատակային նյութեր) հոդվածի առաջին և երկրորդ եռամսյակների «1500.0» թվերը փոխարինել «4000.0» թվերով, 5132 (Ոչ նյութական հիմնական միջոցներ) հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների «2000.0» թվերը փոխարինել «1650.0» թվերով:

6. Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 01, դաս 01 (Բնակարանային շինարարություն) և տնտեսագիտական դասակարգման 4251 (Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածի առաջին և երկրորդ եռամսյակների «1500.0» թվերը փոխարինել «500.0» թվերով:

7. Գործառական դասակարգման բաժին 06, խումբ 04, դաս 01 (Փողոցների լուսավորում) և տնտեսագիտական դասակարգման 4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների «11000.0», «13000.0», «18000.0» և «25000.0» թվերը համապատասխանաբար փոխարինել «9000.0», «11000.0», «16000.0» և «23000.0» թվերով:

8. Գործառական դասակարգման բաժին 10, խումբ 07, դաս 01 (Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)) և տնտեսագիտական դասակարգման 4729 (Այլ նպաստներ բյուջեից) հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների «3000.0», «4000.0», «6500.0» և «10000.0» թվերը համապատասխանաբար փոխարինել «5000.0», «6000.0», «8500.0» և «12000.0» թվերով:

9. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 05, դաս 01 (Երաժշտական դպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի առաջին եռամսյակի «7000.0» թիվը փոխարինել «6900.0» թվով, 4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածի առաջին եռամսյակի «400.0» թիվը փոխարինել «500.0» թվով:

10. Գործառական դասակարգման բաժին 09, խումբ 05, դաս 01 (Մարզադպրոցի պահպանման ծախսեր) և տնտեսագիտական դասակարգման 4111 (Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ) հոդվածի առաջին եռամսյակի «8000.0» թիվը փոխարինել «7900.0» թվով, 4212 (Էներգետիկ ծառայություններ) հոդվածի առաջին եռամսյակի «270.0» թիվը փոխարինել «370.0» թվով:

11. Գործառական դասակարգման բաժին 04, խումբ 05, դաս 01 (Ճանապարհային տրանսպորտ) և տնտեսագիտական դասակարգման 5112 (Շենքերի և

շինությունների կառուցում) հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների «79831.4», «160331.4», «179831.4», «179831.4» թվերը համապատասխանաբար փոխարինել «77531.4», «158031.4», «177531.4» և «177531.4» թվերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«20» մարտի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ**

*Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք*
*Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ** N 259-Ա
20 մարտի 2024 թվական

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության, 12-րդ կետի 2-րդ ենթակետի և 20-րդ կետի 1-ին ենթակետի, ինչպես նաև 7-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության և 20-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի կարիքների համար Անիի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 44221120, 44221100, 44221110, 44221140, 44221160, էլեկտրոնային աճուրդի միջոցով՝ ապրանքների /Կրկնակի ապակիով միավորներ, Մետաղապլաստե պատուհաններ, Պատուհանի շրջանակներ, դռներ, Դռների շրջանակներ/ ձեռքբերման նպատակով ձևավորել պատասխանատու ստորաբաժանում հետևյալ կազմով.

   Էդգար Սաղաթելյան – Անի համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ – ղեկավար

   Անանիկ Ուռումյան - Անի համայնքի ղեկավարի օգնական - անդամ

   Գագիկ Սարոյան – Սառնաղբյուր բնակավայրի վարչական ղեկավար – անդամ

   Վիլհելմ Օլեյան - Անիի համայնքապետարանի քաղաքաշինության,

հողաշինության, կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի 2-րդ մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար – անդամ

Կարեն Շաբոյան – Անի համայնքի Սառնաղբյուրի մշակույթի տան պատասխանատու - անդամ

2. Վերը նշված ապրքնաների ձեռքբերման նպատակով գնումների համակարգողի լիազորությունները վերապահել Անի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված համայնքային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Սաթենիկ Զաքարյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

«20» մարտի 2024 թվական
Քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ** N 260-Ա
21 մարտի 2024 թվական

### ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 7-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության, 8-րդ կետի 3-րդ ենթակետի և 11-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անիի համայնքապետարանի կարիքների համար Անիի համայնքապետարանի 2024 թվականի բյուջեից նախատեսվող միջոցների հաշվին իրականացվող գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագրերով՝ /ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)/՝ 44221120, 44221100, 44221110, 44221140, 44221160, էլեկտրոնային աճուրդի միջոցով՝ ապրանքների /Կրկնակի ապակիով միավորներ, Մետաղապլաստե պատուհաններ, Պատուհանի շրջանակներ, դռներ, Դռների շրջանակներ/ ձեռքբերման գնումների կազմակերպման համար սահմանել գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

   Հարություն Համբարյան - Անիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար

   (նախագահ)

   Աստղիկ Մկրտչյան - Անի համայնքի ղեկավարի օգնական /անդամ/

   Գևորգ Շաբոյան - Անի համայնքի ղեկավարի խորհրդական /անդամ/

   Անժելա Սաղաթելյան - Անիի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար /անդամ/,

2. ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Անիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքային

ստորաբաժանումների մեջ չներառված համայնքային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Սաթենիկ Զաքարյանին:

Սահմանել, որ ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/3 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել 2024 թվականի մարտի 21-ին, ժամը 12:30-ին, ՀՀ Շիրակի մարզ, Անիի համայնքապետարան ք. Մարալիկ, Մաղաթյան 1 հասցեում:

3. Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն և այլ իրավական ակտերին համապատասխան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

«21» մարտի 2024 թվականի
Քաղաք Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՀՀ Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ, քաղաքային հրապարակ
Հեռ. (0242)2-24-00, (0242)2-22-37, (044)04-50-50 Էլ. հասցե՝ ani.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 261-Ա

<<22>> մարտի 2024 թվական　　　　　　　　քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ, ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 13-Ի N 134-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արմեն Սարգիսի Սուքիասյանի՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարին ներկայացված 2024 թվականի փետրվարի 5-ի դիմումը:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Կոլտնտեսականների փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 4 հասցեում գտնվող 08-003-0026-0088 կադաստրային ծածկագրով **0,10** հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, որը ըստ որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված հատակագծի տվյալների փաստացի կազմում է **0,13** հեկտար և որում առկա են բնակելի տուն և օժանդակ շինություններ, Մարալիկ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 17.06.1997 թվականի թիվ 6 որոշմամբ սեփականաշնորհվել է Սարգիս Կառլենի Սուքիասյանի/մահացած 22.09.2017թվական/ 4 անձից բաղկացած ընտանիքին, իսկ քաղաքացիների կողմից ավել օգտագործվող **0,03** հեկտար հողամասը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի պահանջներին (գործում առկա է նաև ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, կազմված 05.02.2024 թվականին, ժառանգական գործի համար՝ թիվ 29):

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության, 4-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 37-րդ կետի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի, Կոլտնտեսականների փողոց, 2-րդ նրբանցք թիվ 4 հասցեում գտնվող բնակելի նպատակային նշանակության շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինության զբաղեցրած և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0026-0088 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված պահանջներին, հողամասը ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով.

*որոշում եմ՝*

1. Վերականգնել գույքային իրավունքները և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի, Մարալիկ քաղաքի, Կոլտնտեսականների փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 4 հասցեում գտնվող բնակելի տան, օժանդակ շինությունների, պարսպի և նրանց պահպանման ու սպասարկման համար նախատեսված 08-003-0026-0088 կադաստրային ծածկագրով 0,13 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ ճանաչել քաղաքացիներ՝ Կարինե Ջավենի Ավետիսյանի (ծնված 07.03.1959 թվական, անձնագիր՝ AL0328232, տրված 10.07.2023թվականին 022-ի կողմից), Արմեն Սարգիսի Սուքիասյանի (ծնված 16.03.1988 թվականին, նույնականացման քարտ՝ 013183496, տրված 18.11.2022 թվականին 022-ի կողմից), Նարինե Սարգիսի Սուքիասյանի (ծնված 29.11.1984 թվական), ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետի կողմից կազմված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի, Կոլտնտեսականների փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 4 հասցեում գտնվող հողամասի եվ նրանում առկա շինությունների նկատմամբ քաղաքացիների գույքային իրավունքները վերականգնելու մասին Անի համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 13-ի N 134-Ա որոշումը:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներին սույն որոշման մասին պատշաճ ծանուցման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<22>> մարտի 2024 թվական
Քաղաք Մարալիկ